

«ԹՎԻՆ 6370 [862] Գնացին ծովից այն կողմ՝ վարյագների, ռուսների մոտ: Այդ վարյագներին ռուս էին անվանում, ինչպես մյուսներին անվանում են շվեդներ, ոմանց՝ նորմաններ ու անգլեր, իսկ այլոց՝ գոթլանդցիներ. այդպես էլ և սրանք: Ասացին ռուսներին չուղը, սլավոնները, կրիվիչներն ու վեսը. «Մեր հողը մեծ է ու առատ, բայց նրանում կարգ ու կանոն չկա: Եկե՛ք իշխանություն արե՛ք ու տիրե՛ք մեզ....»¹:

Նեսարո, «Անցած տարիների պատմություն»

Գևորգ Ս. Խուդինյան

Պատմ. գիտ. դոկտոր

ՌՈՒՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՄՈՒՏԸ*

Բանալի բառեր – մեծ պատերազմ, աստվածներ, հերոսներ, Ալթայ, շամաններ, վիկինգներ, Պերուն, Օդին, լոնդոնյան Սիթի, Ուոլլ Սթրիթ, ազատ ռուսներ, Ուկրաինա, Ռուսաստան, հաղթանակ, ինքնասպանություն:

2022 թ. փետրվարի 24-ին ռուսական զորքերի ներխուժումն Ուկրաինա հատուկ գործողություն չէ և ոչ էլ սովորական պատերազմ. սա **մեծ պատերազմ** է, որի պատմական, մշակութային ու վերջապես՝ քաղաքակրթական ենթաշերտերի բացահայտումը խիստ անհրաժեշտ է նաև մեզ՝ հետխորհրդային հեղափոխումների հորձանուտում հայտնված հայերիս:

Ցանկացած մեծ պատերազմի նպատակներն ու էությունը հասկանալու համար հարկավոր է պարզել, թե դրա նախօրեին ինչ սրբազան ծեսեր են կազմակերպել հակամարտող կողմերի ռազմական առաջնորդները և իրենց ինքնությունը խորհրդանշող որ **աստվածներին** ու **հերոսներին** են դիմել հաղթանակի հասնելու ակնկալիքով: Քանի որ Ռուսաստանի ու Ուկրաինայի բանակների առանցքային դեմքերը ներկա դաժան պատերազմից առաջ այս առումով, հիրավի, դասական օրինակներ են ի ցույց

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.04.2022:

¹ *Повесть временных лет* (Подготовка текста, перевод и комментарии О.В. Творогова), Библиотека литературы Древней Руси РАН. ИРЛИ; Под ред. Д.С. Лихачёва, Л.А. Дмитриева, А.А. Алексеева, Н.В. Понярко. Т.1: XI-XII века, СПб., «Наука», 1997, https://librebook.me/povest_vremennyh_let/vol1/1 (մուտք 20.03.2022).

դրել, նման ծեսերի միջոցով ասպարեզ բերված **արքետիպերի** քաղաքակրթական բովանդակության քննությունն ուսանելի կարող է լինել նաև մեզ համար:

Պատերազմի նախօրեին դրա անխուսափելիության մասին ահազանգող Ռուսաստանի ընդդիմադիրներն ու էլեկտրոնային լրատվամիջոցները բազմիցս են վկայել ՌԴ նախագահի ներկայությամբ պաշտպանության նախարար **Սերգեյ Շոյգուի** նախաձեռնած՝ **ալթայցի շամանների** հատուկ ծեսերի մասին: Շամանների միջոցով ոգիների հետ խոսելու նման փորձերին հակառակ՝ ուկրաինական բանակի էլիտար ստորաբաժանումները, մասնավորապես՝ մահապարտների «Ազով» գունդը, իրենց ծիսական արարողություններով երկրպագում էին **Հին Ռուսիայի** ամպրոպի աստված **Պերունին** և սկանդինավյան վիկինգների (վարյագների) աստվածացված նախնուն՝ **Օդինին**²: **Քանզի սկանդինավյան ռուս (ռոս) ցեղի առաջնորդ Ռյուրիկի կողմից 862 թ. հիմնված Ռուսիայի զավակների՝ Ռուսաստանի և Ուկրաինայի ներկա մահացու գոտեմարտն այն դարավոր արքետիպերի բախումն է, որոնց պայքարը ձանապարհ է բացելու արևմտյան քաղաքակրթության արևելյան սահմանների հստակեցման համար:**

Ու թեև վերջերս Ուկրաինայի իրադարձություններից ոգևորված **Ֆրենսիս Ֆուկոյաման** փորձել է ավելի արդիական արժեհամակարգ փնտրել այս արյունահեղության պայքարների մեջ և տեղի ունեցողը բնութագրել է որպես **ազապության գաղափարի** հաղթարշավի որակապես նոր հանգրվան, մենք մնում ենք դեռևս 2014 թ. սկզբին՝ ռուս-ուկրաինական առաջին պայքարագլխի օրերին, «Վէմ»-ի արտահայտած այն տեսակետին, որ իրականում մեր շուրջը տեղի է ունենում «...ԽՍՀՄ փլուզումով սկսված՝ համաշխարհային պայքարության գծային ընթացքի շրջափուլային փարածում-դիֆուզիան՝ նախկին կայսրության սահմանային երկրամասերում կամ «ուկրաինաներում»»³:

Անպարտելի համարվող Ռուսաստանին անելանելի վիճակի մեջ դնելու համար նրա դեմ «կազակական ցեղի ծնունդ»⁴ **ազապ ռուսներին**՝ ուկրաինացիներին դուրս բերելու ծրագիրը նույնպես մենք բացահայտել ենք 2014 թվականին. «...փորձ է արվում իրականություն դարձնել ազապ ռուսների միջոցով անազապներին կամ վերջիններին բնորոշմամբ՝ «մոսկալներին» ազապագրելու, այսինքն՝ «երկվորյակների դիմակայություն» խաղարկելու փորձերակը»⁵: Եվ հենց այդ ժամանակ զգուշացրել ենք, որ սա ռուսական պետության թուլությունն իր դեմ օգտագործելու՝ դարձրել փորձարկված տեխնոլոգիա է, քանզի «Արևմուտքի անգլոսաքսոնական «միջուկի» համար «ուկրաինական խնդիր», որպես այդպիսին, գոյություն չունի. խնդիրն Ուկրաինայի միջոցով Ռուսաստանի ներքաշումն է երկարատև և ուժասպառ անող

2 Օդինի պաշտամունքի մասին տե՛ս **Ճաղարյան Գ.**, Թոմաս Քարլայլի «Հերոսների, հերոսապաշտության և պատմության մեջ հերոսականի մասին» երկը: Մաս երկրորդ: Հերոսն իբրև աստվածություն, մարգարե և բանաստեղծ, «Վէմ», Եր., 2021, N 1, էջ 100-111:

3 «Նոր մարտահրավերների անատոմիան», «Վէմ», Եր., 2014, N 1, էջ 5:

4 Սրանք Ուկրաինայի պետական օրհներգի վերջին բառերն են:

5 «Նոր մարտահրավերների անատոմիան», էջ 4:

դիմակայության մեջ»⁶։ Եվ որպես դրա վաղ օրինակ վկայաբերել ենք Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի շրջանում՝ 1919 թ. աշնանը, **Անտոն Դենիկինի** բանակի թիկունքին ուկրաինական անարխիստների առաջնորդ **Նեստոր Մախնոյի** 60-հազարանոց հեծելազորի հասցրած մահացու հարվածը։

Ինչպես տեսնում ենք, մեր բոլոր նախազգուշացումներն իրականություն են դարձել, բայց քանի որ մեկ անգամ արդեն ռուս ազգայնականության ողնաշարը կոտրած նման աշխատակարգերը շարունակում են գործի դրվել հենց իր՝ Մոսկվայի նախաձեռնած պատերազմում, ականա հարց է առաջանում՝ ովքեր և ինչպես դրդեցին Ռուսաստանի ղեկավարին նման քայլի։ Արդյոք սա անգլոսաքսերի կողմից վաղուց մշակված՝ քաղաքական տեխնոլոգիաներն անտեսելու արդյո՞ւնք էր, թե՞ իր հրեա-թուրքական «ոխտերիմ բարեկամների» լարած ծուղակն ընկնելու հետևանք։ Դատեք ինքներդ. ինչպես 1919 թ. աշնանը անգլոսաքսերի «թանկագին ծառայությունից» օգտված Կարմիր բանակի հրամանատար **Լ. Տրոցկին**, այնպես էլ այսօր նույն դերին հավակնող Ուկրաինայի նախագահ **Վ. Զելենսկին** ու նաև երկու ժողովուրդներին բացահայտորեն կոմեցնող՝ Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիության «հրամանատարները»՝ **Վ. Սոլովյովը** (Ռուսաստան) և **Դ. Գորդոնը** (Ուկրաինա), և, իհարկե, ստամբուլյան բանակցությունների «անփոխարինելի միջնորդ» **Ռ. Աբրամովիչը** միևնույն՝ հրեական ծագումն ունեն։ Եվ եթե հրեական արմատներ ունեցողներին գումարենք թուրքական ծագում ունեցող ՌԴ պաշտպանության նախարար **Սերգեյ Կոմուզեթովու Շոյգուին**, որը նախքան պատերազմը շամանական ծեսերով «կախարդել էր» Ռուսաստանի նախագահին, ուկրաինացիներին բացահայտորեն իրենց ռուս եղբայրների դեմ տրամադրող Մեծ Բրիտանիայի վարչապետ **Բ. Զոնսոնին** (պապի կողմից՝ Օսման Ալի)⁷ և, իհարկե, Ուկրաինայի ազատության մարտիկ Ստեֆան Բանդերայի՝ կախաղանի դատապարտվելու պահին արտաբերած «**Սլավա Ուկրաինե**» բացականչությունը թուրքական նման կրկնող թուրք բռնապետ **Ռ. Էրդողանին**, ապա այս կատարյալ խառնաշփոթի հետևում կուրվագծվի ռուս-ուկրաինական երկրորդ պատերազմի հրեա-թուրքական տիկնիկավարների հստակ շրջանակը, որը, փաստորեն, համընկնում է Ղարաբաղյան երկրորդ պատերազմի՝ **Բ. Զոնսոն - Բ. Նաթանյահու - Ռ. Էրդողան - Վ. Պուտին** դիրիժորական քառյակի հետ, միայն թե կա մեկ էական տարբերություն. վերջինս սուբյեկտից վերածվել է **օբյեկտի**։

Բարեկամ ժողովուրդներին՝ հայերին և ապա ուկրաինացիներին բաժին ընկած «խփիի յուրայիններին, որ օտարները վախենան» մետամորֆո-

⁶ Նույն տեղում։

⁷ Բ. Զոնսոնի թուրք պապը **Օսման Ալին**, իր հոր՝ Քեմալ Աթաթուրքին մահվան դատապարտած Օսմանյան կայսրության ներքին գործերի վերջին նախարար **Ալի Բեմալի** մահապատժից հետո փախել է Մեծ Բրիտանիա և ձեռք բերել **Վիլֆրեդ Զոնսոն** անուն-ազգանունը (տե՛ս [https://ru.wikipedia.org/wiki/Джонсон, Борис](https://ru.wikipedia.org/wiki/Джонсон,_Борис) (մուտք՝ 20.03.2022))։

գլի կրկնության գաղտնիքը թաքնված է Ռուսաստանի հրեա-թուրքական լորբիին ուղղորդող գլոբալ հետնաբեմում: Բանն այն է, որ 1999-2009 թթ. չեչենական երկրորդ պատերազմում դժվարին հաղթանակ արձանագրած Ռուսաստանի նոր ղեկավար Վ. Պուտինին միասնական Արևմուտքը տրամադրել էր նավթագազային հսկայական՝ 7 տրիլիոնից ավելի տրանշներ՝ երկրի արդիականացումը սկսելու համար: Սակայն նման հնարավորությունը դնելով հանքահումքային ռեսուրսներից գերշահույթներ ստացող լոնդոնյան ֆինանսատնտեսական կլանի (**Սիթիի**) ազդեցության տակ՝ Վ. Պուտինն ու նրա շրջապատը շուտով տարվեցին վերջինիս կողմից **Ուոլլ Սթրիթին** հակադրվելու համար օգտագործվող վերնախավերի կարճամիտ գործելակերպով: Դա ձեռնտու էր 19-րդ դարից լոնդոնյան հովանավորում ունեցող հրեա-թուրքական լորբիին, որը ԽՍՀՄ կործանումից հետո մշակել ու Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևի՝ 1994 թ. մարտի 22-ին բրիտանական «Chatham House»-ում, իսկ մեկ շաբաթ անց՝ մարտի 29-ին, Մոսկվայի պետական համալսարանում ունեցած ելույթներով⁸ հիմնավորել էր, այսպես կոչված, եվրասիականության դոկտրինը: Նպատակը Ռուսաստանի զարգացումը մենաշնորհային պետական կորպորացիաների միջոցով կասեցրած հետխորհրդային վերնախավի գլխի տակ փափուկ բարձրնելն ու լոնդոնյան ֆինանսատնտեսական կլանին ծառայեցնելն էր նախքան Մեծ Թուրանի գաղափարի հասունացումը: Երկրի զարգացման խնդիրները լուծելու փոխարեն հեշտությամբ հարստացած ու Լոնդոնում դոլյակներ ձեռք բերած Ռուսաստանի կորպորատիվ վերնախավը նույնպես իր կասկածելի տնտեսական հզորությունը քաղաքականի ու ռազմականի վերածելու դյուրին ուղիներ էր փնտրում՝ մոռանալով, որ մրցակցային նոր միջավայրում պետությունների ուժը չափվում է ոչ թե նրանց քանակական, այլ **որակական ռեսուրսների** մեծությամբ: Ուստի գլոբալացող աշխարհում իր դարն ապրած բազմաբևեռ աշխարհակարգի մասին դատարկաբանության քողի տակ 2010-ական թվականներից տեղի ունեցավ **կեղտոտ կապիտալի** կողմից սպասարկվող տերությունների ժամանակավոր համախմբումը, որի շրջագծում հաջողության հասնելու Մոսկվայի հույսերն էլ ավելի մեծացան ԱՄՆ-ում լոնդոնյան կլանի ներկայացուցիչ Դոնալդ Թրամփի իշխանության գալուն զուգահեռ: Վերջինս, տարվելով «քաշ փող» վաստակելու մոլուցքով, փաստորեն, արևելյան կիսագունդը հանձնել էր իր նման «լավ տղաների»՝ Ռ. Էրդողանի ու Վ. Պուտինի տնօրինությանը, որոնք «համատեղ յեղեր» էին կազմակերպում Սիրիայում, Լիբիայում, Լեռնային Ղարաբաղում և այլ տարածաշրջաններում: Ի տարբերություն

8 St'u Пантелеев С., Евразийский проект Назарбаева: Лондон-Москва-Транзит, <https://ruskie.org/articles/evraziyskiy-proekt-nazarbaeva-london-moskva-tranzit/> (մուտք 22.03.2022):

Չինաստանի, որը կարճ ժամանակամիջոցում վերածվեց 21-րդ դարի տեխնոլոգիական ցիկլերի վրա հիմնվող հսկայական աշխատանոցի, գիտական շատ ավելի մեծ ներուժ ունեցող Ռուսաստանն ընկավ **լոնդոնյան ծուղակը**⁹ ընտրելով էքստենսիվ զարգացման ուղին: Ուստի Դոնալդ Թրամփի իշխանության մոտավորապես տասնամյակի մեջ վստահ ԱՄՆ-ի խորքային պետության ներկայացուցիչները տարիներ շարունակ բանակցում էին Կրեմլի աշտարակներից մեկում նստած իրենց ռուս գաղափարակիցների հետ՝ Ռուսաստանին առաջարկելով շատ ավելի գրավիչ և հուսալի հեռանկարներ: Թուրքիայի ու Չինաստանի հետ կասկածելի գործարքներ կնքելու և խաբվելու փոխարեն՝ նրանք պահանջում էին վերականգնել Ռուսաստանի քաղաքակրթական գործառնությունները Եվրոպայում:

Պատմական անհերքելի փաստ է, որ, 18-րդ դարից սկսած, Ռուսաստանյան կայսրությունը հզորացել և եվրոպական ու համաշխարհային քաղաքականության ասպարեզ է մտել իր **արևմտականացման** հաջորդական շրջափուլերի (ցիկլերի) միջոցով, այսինքն՝ Ռուսաստանը՝ որպես տերություն, զարգացել ու ծաղկել է իբրև եվրոպական երկիր: Ուստի տեխնոլոգիական հասարակության ու տեղեկատվության դարում եվրասիականության դոկտրինի ներդրումը ոչ անհայտ **Ալեքսանդր Դուգինի** և 1988-ի օկուլտիստա-սատանայապաշտական խմբակներից նրա «անմոռաց ընկեր» **Հեղար Ջենալի**⁹ կողմից հրեա-թուրքական լորիի նպատակային գաղափարախոսական խափանարարության արդյունքն էր: Նման հայեցակարգի վրա հիմնվող կայսրության վերականգնման հեռանկարը չէր կարող փակուղի չմտնել անգամ այդ նպատակով 2020 թ. իրականացված առաջին «համատեղ գործողությունից»՝ դարաբաղյան 44-օրյա պատերազմից հետո: Որովհետև դրան հաջորդած իրադարձությունները ցույց տվեցին, որ հանուն այդ նպատակի իր դաշնակցին գոհաբերած Ռուսաստանը ոչ միայն տնտեսապես, այլև ռազմական առումով պատրաստ չէ դեպքերի հետագա զարգացմանը: Ուստի նոր հազարամյակի առաջին տասնամյակում նրան տնտեսապես ոտքի կանգնելու և եվրասիական հավասարակշռության կարևոր բաղադրիչը դառնալու հնարավորություն տված ԱՄՆ-ի համար ակնհայտ դարձավ, որ իր հակաարևմտյան մտասևեռումն ամրապնդող Ռուսաստանի ղեկավարությունը կորցնում է իրականության զգացողությունը:

Ալեքսանդր Նեսկու ժամանակներից սկսած՝ Ռուսաստանի ղեկավարներին համակած հակաարևմտյան մտասևեռումի հիմքում ընկած էր ժամանակին նաև Բյուզանդիայի կործանման պատճառը դարձած այն հա-

⁹ Վերջերս Ալլահի գիրկն ուղևորված այդ հայատյաց իսլամիստը սերում էր 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների ժամանակ ՀՅԴ մարտիկների կողմից ավերված Դարաբաղի հայտնի ավագակային որջից: Գյուլափուլից: Ավելի մանրամասն տես **Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Եր., ԵՊՀ հրատ., 1992,** էջ 340-341:

մոզմունքը, որ ճշմարիտ կամ ուղղափառ հավատի պահպանման համար ավելի լավ է հպատակվել անհավատներին (թաթարներ, թուրքեր և այլն), քան քրիստոնյա Արևմուտքին, որը Նոր ու Նորագույն ժամանակներում ամրապնդվեց Նապոլեոնի և ապա Հիտլերի կողմից միավորված Եվրոպայի ավերիչ արշավանքների դառը վերնուշի միջոցով: Բայց ողջ խնդիրն այն է, որ իրականում դրանք եվրոպական հավասարակշռության պահպանման անգլոսաքսոնական քաղաքականության տապալման փորձեր են եղել, երբ մայրցամաքային Եվրոպան, հզորանալով ու ընդարձակվելով դեպի արևելք, բացասել է ինքն իրեն: Ավելին՝ և՛ Առաջին, և՛ Երկրորդ աշխարհամարտերում նման փորձերը հաղթահարվել են հենց Ռուսաստանի հետ անգլոսաքսերի սերտ փոխգործակցության միջոցով: Ուստի ԱՄՆ-ի նոր վարչակազմի ձևավորումից հետո Արևմուտքում պետք է ընտրություն կատարվեր Ռուսաստանը ներսից թուլացնելու ու քանդելու՝ **լոնդոնյան** և արդիականացնելով Չինաստանին հակակշռող առանցքային տերության վերածելու՝ **վաշինգտոնյան** ռազմավարությունների միջև: Ու մինչ Վ. Պուտինի ժառանգորդի փնտրտուքով զբաղված Ռուսաստանի իրական հայրենասերները, որոնք Գլխավոր շտաբի հետախուզական վարչությունից կենտրոնացել էին Անվտանգության դաշնային ծառայության շուրջ, պրոֆետոր **Վալերի Սոլովեյի** բերանով լայն քարոզչություն էին ծավալել Պուտինին առոք-փառք ճանապարհելու հարցի շուրջ, վերջինս, ոչ առանց Ռուսաստանը դեպի անդունդ հրող հրեա-թուրքական լոբբիի հուշարարության, նորից հիշեց իր մանկության երազանքի՝ ԽՍՀՄ վերականգնման մասին: Այդ տեսանկյունից բնական է, որ առաջին **ծիսական զոհը** ԽՍՀՄ առաջին ժողովրդավարական շարժման՝ Դարաբաղյան շարժման հետևանքով ծնված Լեռնային Դարաբաղի Հանրապետությունն էր լինելու: Դրանից հետո է, որ լայն ճանապարհ բացվեց **ռուսական արջի** ծիսական զոհաբերումն իրականացրած ալթայցի (տուվացի) Շոյգուի ու ՌԴ գլխավոր շտաբի պետ, թաթարստանցի (կազանցի) Գերասիմովի ուկրաինական փորձարարության և այն «գաղափարապես հիմնավորող», բայց իրականում Ուկրաինայից ու Ռուսաստանից հրեաների նոր «ալիայի» կազմակերպման մասին մտածող, Իսրայելի «Նաթիվ» ծառայության նախկին ղեկավար **Յակով Կեդմիի** համար:

Մինչև որ... հերթական անգամ հաստատվեց ավելի քան ակնհայտը, այն է՝ **ուկրաինական քաղաքական ազգն** ինքն է փորձում դառնալ ռուսական երկգլխանի արծվի եվրոպահայաց դեմքը, որի սլավոնա-վարյագական սուբստրատը համառորեն ձգտում է դեպի Եվրոպա: Ուստի Ուկրաինան՝ որպես ազատ ռուսների երկիր, կենաց-մահու կռիվ է մղում ուգրո-ֆիննական սուբստրատի հիման վրա ձևավորված թաթար-սլավոնական Մոսկովիայի դեմ: Դա է պատճառը, որ ռուսական քաղաք Խարկովն

ավելի կատաղորեն է կռվում ռուսական բանակի դեմ, քան ժամանակին Գաբեզին Նժդեհի նման ֆաշիզացված՝ Ստեֆան Բանդերայի արևմտյան համերկրացիները: Ուրեմն՝ ներկայիս Ռուսաստանի համար հաղթել Ուկրաինային նշանակում է ապահովել Ալթայի շամանների հաղթանակը ռուսական քաղաքակրթության հանդեպ, այսինքն՝ հաղթել իր իսկ խորքային բնորդին, որը մարմնավորում է ոչ թե Ռուսաստանի եվրասիական ներկան, այլ ռուսական քաղաքակրթության բուն արժեհամակարգը: Ու թեև ռուս-ուկրաինական պատերազմից առաջ կազմակերպված ծիսական արարողություններից մեկի ժամանակ ալթայցի շամաններն ասել են Վ. Պոտոխին՝ «**Դու հաղթելու ես, ո՛վ մեծն ցար**», բայց քանի որ Ռուսաստանի համար հաղթել Ուկրաինային նշանակում է մշակութային ու քաղաքակրթական առումներով հաղթել **ինքն իրեն**, ուստի օրինաչափ հարց է ծագում՝ ինքն իրեն հաղթելու ասպարեզում դրսևորվող նման համառոտյունը չի՞ բացում արդյոք ինքնասպանության ուղին:

Պատերազմի 43-րդ օրը ամերիկյան **Լենդ-լիգի** գործարկումից հետո, մեծ հաշվով արդեն ԱՄՆ-ի կողմից որոշվող՝ նրա զուտ ռազմական արդյունքներից անկախ, Լոնդոնը տարել է ռուս օլիգարխների **փողերը**, իսկ հրեա-թուրքական լոբբին տանելու է Ռուսաստանի **հողերը**, որպեսզի երկատված դժբախտներին՝ ազատ ու անազատ ռուսներին, մնան միայն **համատեղ զոհերը**: Դեռ լավ է, որ ամերիկյան դեմոկրատները չեն ցանկանում Ռուսաստանի վերջնական պարտությունը, քանզի նրանց **կրկնակի զսպման քաղաքականությունը** պահանջում է հաջորդ ապտակը պահել Դոնալդ Թրամփի մատնանշած մյուս «լավ տղայի»՝ Ռ. Էրդոհանի համար:

Ներկա հրապարակման **եզրակացություններին** անցնելուց առաջ պետք է արձանագրել, որ պատմության գծային ընթացքի, ուրեմն և առաջադիմության հանդեպ հաղթանակ արձանագրելու՝ Ռուսաստանի ղեկավարության իռացիոնալ փորձարարության ձախողմամբ **մարում է** ռուսական քաղաքակրթությանը բնորոշ ընդարձակման անսանձ տարերքը: Բայց ռուսական քաղաքակրթության ներկա մայրամուտը ոչ թե նրա կործանման, այլ ռացիոնալ վերաիմաստավորման սկիզբն է միայն: Ռուսաստանն այսօր ոչ թե պլավոնաթյուրքական սինեքզիի հիմքերը դրած Ալեքսանդր Դուգինի, այլ գերմանացի մեծ փիլիսոփա **Օսվալդ Շպենգլերի** գաղափարների կարիքն ունի, որը 20-րդ դարի սկզբներին ազդարարելով եվրոպական (արևմտյան) քաղաքակրթության մայրամուտի մասին, փաստորեն, նպաստեց նրա հետագա հզորացմանը:

Ռուսաստանի պատմության գծային ընթացքի ներկա խաթարումը 862 թ. ռուսական մեծ քաղաքակրթության հիմքերը դրած առաջին իշխան Ռյուրիկի, նրա որդի Իգորի, Ռուսիայի բոլոր թշնամիների սարսափ Սվյա-

տոսլավի, Կիևի առաջին քրիստոնյա տիրակալ **սուրբ Վլադիմիր Մեծի**, նրա հայազգի տիկին **սուրբ Աննայի** ու նրանց որդի Յարոսլավ Իմաստունի՝ հերոս վիկինգների, քրիստոնյա սրբերի ու իմաստուն կառավարիչների գործը շարունակելու անկարողության վկայություն է: Ուստի ռուսական մեծ քաղաքակրթության ժառանգների եղբայրասպանությունը քաղաքակրթական առումով դառնում է ինքնասպանություն Ռուսաստանի ու վերածննդի թույլ հնարավորություն Ուկրաինայի համար: Սա էքստենսիվ զարգացման ուղին ընտրած մայրցամաքային կայսրություններից վերջինի ու ամենաերկարակյացի առերեսումն է ռուսական քաղաքակրթության էությանը տափաստանների քոչվորականին բնորոշ դուզինյան սահմանափակ մտածողության անհամապատասխանության փաստին:

Անշուշտ, Ուկրաինայից Կիևյան Ռուսիայի խորհրդանիշերը խլելու համար Ռուսաստանի նախագահը չէր կարող չմտածել Կիևի առաջին քրիստոնյա տիրակալ, իր անվանակից Վլադիմիր Մեծի (978-1015) ժառանգությանը տիրանալու մասին, որովհետև նրանից է սկսվել ռուսական քաղաքակրթության վերելքը: Դրա համար Ռուսաստանում տեղադրելով այդ սրբի հուշարձանը՝ նա թերևս մտածեց, որ պետք է տիրանալ նաև Կիևում գտնվող մասունքներին, և հենց այստեղ է, որ չարաչար սխալվեց: **Որովհետև մարմինն ու հոգին բռնությամբ չեն միավորվում. բռնությունը վերջնականապես տարանջատում է նրանց:**

Այսօր սուրբ Վլադիմիր Մեծի վարյագական եռաժանին ոչ թե Ռուսաստանի, այլ Ուկրաինայի զինանշանն է՝ եվրոպական արժեքներին նրա հավատարմության խորհրդանիշներից մեկը: Ուստի ժամանակին երկու սլավոնական ժողովուրդների համար էլ պետություններ հիմնած վարյագ-վիկինգների ու մոնղոլ-թաթարների խորքային գոտեմարտը դառնում է ոչ թե նրանց միավորման, այլ նոր բաժանման սկիզբը: Եվ այլևս էական չէ, թե կոնկրետ ո՞ր գետով կամ բլրով է անցնելու ռուս-ուկրաինական ապագա սահմանը: Կարևորն այն է, որ դա լինելու է ոչ միայն երկու երկրների, այլև պատերազմի հետևանքով տարանջատվող երկու քաղաքակրթությունների սահմանագիծը:

Սրանով Ռուսաստանը երկար ժամանակով ձեռք է բացում իր քաղաքական ու քաղաքակրթական նախապատվությունների միջև՝ վերածվելով ասիական, փակ երկրի, որը քաղաքակրթական առումով ավելի մոտ է Հյուսիսային Կորեային, քան Ուկրաինային կամ Հայաստանին:

Սրանով մեզ ավանդաբար հոգեհարազատ Ռուսաստանը դառնում է անձանաչելիորեն օտարացող այն բարեկամը, որի համար վրա է հասնում իր ազդեցության գոտիները փուլ առ փուլ հանձնելու եզրափակիչ հանգրվանը:

Ուկրաինայի անտառներում ու դաշտերում ներկայումս շարունակվող երկու հակադիր քաղաքական ինքնությունների օրհասական պայքարն ար-

տացույում է ներսից ձեռքված ռուսական քաղաքակրթության **շպենգլեր-յան մայրամուտի** հրավառ ցուքերը, որոնք մեզ համար լուսարձակում են՝

մի կողմից՝ իրենց հայրենիքից փախչող միլիոնավոր ուկրաինացիների՝ եվրոպական երկրներում ապաստանելու և նրանց գենոֆոնդը բարելավելով՝ աֆրիկացիների ու մահմեդականների ներհոսքից **եվրոպան փրկելու** հեռանկարը,

մյուս կողմից՝ հետևողականորեն դեգրադացող մեծ ու հարուստ Ռուսաստանում կարգ ու կանոն հաստատելու համար անխուսափելի դարձող՝ անդրծովյան վարյագների նոր հրավերի՝ 862 թվականի կրկնության հեռանկարը. **«Մեր հողը մեծ է ու առատ, բայց նրանում կարգ ու կանոն չկա: Եկեք իշխանություն արեք ու տիրեք մեզ....»:**

Ուստի ռուսական քաղաքակրթության մայրամուտի ցուքերում երբեմն ուրվագծվող՝ **գլոբալ Ապոկալիպսիսի** խաբուսիկ տեսարանները չպետք է շփոթեցնեն զարմացած ու վախեցած հանդիսատեսին: Իրականում դրանք լուրջ հնարավորություն են՝ ոչ միայն քաղաքակրթորեն Ռուսաստանին հոգեհարազատ երկրների, այլև ռուս մեծ ժողովրդի համար, որը **պարտվել չգիտի, երբ կովում է արդարության համար:** Հակառակ պարագայում ստիպված ենք լինելու եզրակացնել, որ սա ռուսների պատերազմը չէր, այլ նրանց փոխադարձ ոչնչացումը՝ իրենց իսկ ձեռքերով: Ռուսների պատերազմը դեռ լինելու է՝ ռուսական քաղաքակրթության **մայրամուտին** հաջորդող մշակութային վերածննդի **լուսաբացից** հետո, որի ընթացքում նրանք կվերհիշեն, որ սուրբ Սոֆիայի Մայր տաճարը ոչ թե Կիևում է, այլ Կոստանդնուպոլիս-Ցարգրադ-Ստամբուլում: Բայց ներկա ազովյան մայրամուտի ու վաղվա բոսֆորյան լուսաբացի արանքում դեռ երկար ու ձիգ **գիշեր** է սպասվում՝ ռուսական դաժան ձմռան փոթորիկների գիշերը, որի ընթացքում ռուսները կբանաձևեն **արդարության** իրենց նոր ընկալումը՝ այս անգամ այն միաձուլելով **ազատության գաղափարի** հետ որպես **Նոր Ռուսական Պրավդա:**

Իսկ ի՞նչ ենք անելու մենք՝ հայերս, այդ երկար ու ձիգ գիշերվա ընթացքում: Ռուսական քաղաքակրթության մայրամուտի ներկա համառոտ ուրվագիծը ոչ թե Ռուսաստանի «դարչնագույն ներկայի» ու «փոթորկուն ապագայի» միջև կողմնորոշվելու ճանապարհային քարտեզ է, այլ Հայաստանի **սուրյեկտայնացման** վաղուց հասունացած խնդրի լուծումն արագացնելու կոչ: Ո՛չ միայն Ռուսաստանի «դարչնագույն ներկան», այլև նույնիսկ՝ «վարդագույն ապագան» ոչինչ չեն տալու Հայաստանին, եթե առաջիկայում նա չունենա պաշտոնական Մոսկվայի հետ հարաբերություններում իր **սեփական, առանձին շահը** բանաձևող քաղաքական ընտրանի, որը կառաջնորդվի մեր ռուսամետների ծառայամտությունն ու արևմտամետների քամահրանքը հաղթահարող՝ տակիտոսյան **«առանց սիրո և ատելության»** բանաձևով:

Գևորգ Ս. Խոուդինյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին ՀՅԴ պատմության ու գաղափարաբանության վերաբերյալ: Զբաղվում է նաև հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Էլ. հասցե՝ khoudinyan@yahoo.com

Summary

THE SUNSET OF RUSSIAN CIVILIZATION

Gevorg S. Khoudinyan

Doctor of Sciences in History

Key words – war, gods, heroes, Altai, shamans, Vikings, Perun, Odin, City, Wall Street, free Russians, Ukraine, Russia, victory, suicide.

The current deadly battle between Russia and Ukraine – the sons of Ruthenia founded by chieftain Rurik of the Scandinavian Rus (Ros) tribe in 862, is a clash of centuries-old archetypes that will pave the way for the clarification of the eastern borders of Western civilization.

Though Francis Fukuyama, recently inspired by the events in Ukraine, tried to find a modern value system in the causes of this bloodshed and described what was happening as a qualitatively new milestone in the triumph of the idea of freedom, we stick to the viewpoint expressed by “Vem” still at the beginning of 2014 – in the days of the Russian-Ukrainian first war, that the well-known London plan was launched to bring the “birth of the Cossack tribe” free Russians – Ukrainians, against Russia so as to put the latter, considered to be invincible, in a hopeless situation thanks to the persistent efforts of the Jewish-Turkish lobby deeply rooted within Russia.

The article presents the main stages of the implementation of that program and the levers and mechanisms of its key players to influence the Russian political leadership.

According to the author, since the 18th century, the Russian Empire had become stronger and had entered the arena of European and world politics through successive cycles of its rationalization, that is, Russia has developed and flourished as a European power. That is why the doctrine of Eurasianism, re-nominated in the 1990s by London’s prompt in the age of technological society and information, is in fact a vulgar Asianism that undermines the civilizational foundations of its own state.

Therefore, the prospect of the USSR restoration based on such a concept could not have stalled, even after the first “successful joint operation” in 2020 – after the 44-day war in Karabakh, since subsequent events showed that Russia sacrificed its ally for it not only economically, but is not militarily ready for further development of events.

The author considers that in such conditions the Ukrainian political nation is currently trying to become the Europe-directed face of the Russian double-headed eagle, whose Slavonic-Varyag nucleus persistently strives for Europe. Therefore, Ukraine, as a country of free Russians, is waging a life-and-death struggle against Tatar-Slavic Moscow, formed on the basis of the Finno-Ugric substratum.

Whereas, for Russia, to conquer Ukraine means to win itself politically and culturally, that is, in terms of civilization. Therefore, such persistence manifested in the arena of “defeating itself” opens the way of Russia’s suicide.

Резюме

ЗАКАТ РУССКОЙ ЦИВИЛИЗАЦИИ

Геворк С. Худинян

Доктор ист. наук.

Ключевые слова – война, боги, герои, Алтай, шаманы, викинги, Перун, Один, Сити, Уолл Стрит, свободные русские, Украина, Россия, победа, самоубийство.

Нынешняя война между сыновьями Руси, основанной в 862 г. вождем скандинавского племени русов Рюриком, – Россией и Украиной, это столкновение многовековых архетипов, которые прокладывают путь к определению восточных границ западной цивилизации.

Несмотря на то, что недавно Френсис Фукуяма, на фоне событий на Украине, пытался найти в причинах нынешнего кровопролития современную систему ценностей и описывал происходящее на Украине как качественно новую веху в торжестве идеи свободы, мы всё же остаемся при своем мнении, выраженном в журнале «Вэм» в начале 2014 г., в дни первой русско-украинской войны: была запущена известная лондонская программа по приведению в безысходное положение считавшейся непобедимой России. Программа была осуществлена также благодаря настойчивым усилиям еврейско-турецкого лобби, пустившем глубокие корни внутри России.

В данной статье представлены основные положения указанной программы, рычаги и механизмы давления главных ее акторов на политическое руководство России.

По мнению автора статьи, начиная с XVIII века, Российская империя усиливалась и поэтапно (циклами) европеизируясь, выходила на арену европейской и всемирной истории, т.е. Россия развивалась и расцветала как европейская держава. По этой причине в век информационного и технологического общества внедренная лондонским суфлерством 1990-х в России евразийская доктрина на самом деле являясь пошлым азиатством, постепенно расшатывающим цивилизационные основы российского государства в пользу еврейско-турецкого лобби.

Следовательно, перспектива воссоздания державы, основанного на евразийской концепции, не могла не зайти в тупик, даже после первых «удачных совместных действий» т. е. 44-дневной войны 2020 г. в Карабахе. Последующие события показали, что Россия, пожертвовавшая своим союзником, не готова к дальнейшему развитию событий ни в экономическом аспекте, ни в военном.

Автор данной статьи считает, что в подобных условиях современная украинская политическая нация пытается перехватить инициативу и стать европейским лицом российского двуглавого орла. Наследница славяно-варяжской Руси упорно стремится в Европу. Украина, как страна свободных русских (казаков), ведет борьбу не на жизнь, а на смерть с татаро-славянской Москвией, сформированной на основе угоро-финского субстрата.

Поэтому стремление победить страну свободных русских - Украину, в цивилизационном плане для России означает победу над самим собой. А упрямство, проявляющееся в стремлении «победить саму себя», открывает путь к самоубийству русской цивилизации, которая стала заложником величия собственного государства.

REFERENCES

1. “Nor martahravneri anatomian”, “Vēm”, Yer., 2014, N 1 (**In Armenian**).
2. “Yevrasiakanut‘yan mer ėnkalumě”, “Vēm”, Yer., 2016, N 3 (**In Armenian**).
3. **Chagharyan G.**, T‘omas K‘arlayli “Herosneri, herosapashtut‘yan yev patmut‘yan mej herosakani masin” yerkě: Mas yerkrord: Herosn ibrev astvatsut‘yun, margare yev banasteghts, “Vēm”, Yer., 2021, N 1 (**In Armenian**).
4. **Pantelejev S.**, Jevrazijskij projekt Nazarbaeva: London-Moskva-Tranzit, <https://russkie.org/articles/evraziyskiy-proekt-nazarbaeva-london-moskva-tranzit/> (**In Russian**).
5. **Povest‘ vremennyx let** (Podgotovka teksta, perevod I kommentarii O. V. Tvorogova) // Biblioteka literatury Drevnej Rusi / RAN. IRLI; Pod red. D. S. Lixachjova, L. A. Dmitrijeva, A. A. Aleksejeva, N. V. Ponyrko. T. 1: XI-XII veka, SPb.: Nauka, 1997 (**In Russian**).